ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՍԱՐԱԿԱՅՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ
ԿԱՊԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտի 1, հեռ. +(374 11) 514-240

№ Հ/ 198 11.07.2019թ.

Ինֆորմացիայի ազատություն
Կենտրոն ՀԿ նախագահ
Շուշան Դոյդոյանին

Հարգելի տիկին Դոյդոյան,

ի պատասխան Ձեր հարցման, նշենք, որ Տեղեկություններ տրամադրելու հարցը կարգավորվում է «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, որի 3-րդ հոդվածի համաձայն՝

«տեղեկություն՝ անձի, առարկայի, փաստի, հանգամանքի, իրադարձության, եղելության, երևույթի վերաբերյալ օրենսդրությամբ սահմանված կարգով ստացված և ձևավորված տվյալներ՝ անկախ դրանց տնօրինման ձևից կամ նյութական կրիչից (տեքստային, էլեկտրոնային փաստաթղթեր, ձայնագրություններ, տեսագրություններ, լուսաժապավեններ, գծագրեր, սխեմաներ, նոտաներ, քարտեզներ).

տեղեկատվություն տնօրինող՝ տեղեկություններ ունեցող պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ, պետական հիմնարկներ, բյուջեներից ֆինանսավորվող կազմակերպություններ, ինչպես նաև հանրային նշանակության կազմակերպություններ և դրանց պաշտոնատար անձինք.

հարցում՝ տեղեկություն փնտրելու և (կամ) դա ստանալու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով տեղեկատվություն տնօրինողին ուղղված գրավոր կամ բանավոր դիմում.»:

Նշված օրենքի նորմերի կարգավորումներից բխում է, որ Երևանի տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են տրամադրել այն տեղեկությունները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով ստացվել և ձևավորվել են Երևանի տեղական ինքնակառավարման մարմիններում վերջիններիս կողմից Սահմանադրությամբ և օրենքներով իրենց վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում: